Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԼՅ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6.1 – Լոռի – ցերեկային կենտրոն (Վանաձոր, Ալավերդի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է թվով 12 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Սոցիալական իրավունքներ եւ ծառայություններ. տեղեկատվություն թոշակի, նպաստների եւ սոցիալական աջակցությունների մասին», «Հաղորդակցում եւ սոցիալական հմտություններ», «Ակտիվ լսման տեխնիկաներ, կրկնարտահայտում, հստակեցում. ոչ վերբալ արձագանք»:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5 խմբային հանդիպում՝ 14 շահառուի մասնակցությամբ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝ երգ-երաժշտություն. գրական-ասմունք, սոցիալ-հոգեբանական. առողջ ապրելակերպ, նկարչական և թատերական, որոնց մասնակցել է թվով 30 շահառու:
  Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 41 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ էքսկուրսիա դեպի մշակութային մայրաքաղաք՝ Գյումրի, Տարեցների միջազգային օր. Ոսկե աշուն, էքսկուրսիա դեպի Ստեփանավան դենդրոպարկ (Սոճուտ անտառ), Լոռի Բերդ ամրոց, քաղաքային ցուցահանդես. քահանայի հետ հանդիպում, թատրոնի օր, ամանորյա միջոցառում, դիմակահանդես. շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (3 անգամ):
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 11 հանդիպում արտթերապևտիկ տեխնիկաների կիրառմամբ՝ ուղղված շահառուների հուզական ոլորտի կարգավորմանը, հոգեկերտվածքի ձևավորմանը, խմբում չգիտակցված կոնֆլիկտների կանխարգելմանը, ինքնաարտահայտմանն ու ինքնաբացահայտմանը, որին մասնակցել է 35 շահառու:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- այլ ծառայությունների տրամադրում
    - Ռուժբրոջ կողմից իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Արտմկանի ինֆարկտ». «Շաքարային դիաբետ». «Գրիպ.կանխարգելման միջոցները»:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Էքսկուրսիա դեպի Գյումրի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/lkmffx),
- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/wgjsfh),
- Ոսկե աշուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/gifwyt),
- Էքսկուրսիա դեպի Ստեփանավան, «Սոճուտ» դենդրոպարկ, Լոռի Բերդ ամրոց (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/dzdsns),
- Մեր առօրյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/kpjcqh):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են RUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտեցումները տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
- Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվել են թիմային քննարկումներ, որին մասնակցել են բուժքույրը, խնամողները, սոցիալական աշխատողը և թիմ լիդերը:
- Յուրաքանչյուր ամիս ցերեկային կենտրոնի պատասխանատուն,սոցիալական աշխատողը մասնակցություն են ունենում Թումանյանի ՄՍԾ-ում կազմակերպվող խորհրդակցություններին:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 26 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տա տարեկան | 10 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 10 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 17 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 10 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 5.1 | երգ-երաժշտության | 15 |
| 5.2 | գրական-ասմունք | 20 |
| 5.3 | թատերական | 10 |
| 5.4 | նկարչական | 10 |
| 5.5 | սոցիալ-հոգեբանական | 14 |
| 5.6 | առողջ ապրելակերպ | 12 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 15 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Առողջապահական դասընթացներ | 20 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «18» 12. 2025թ